

Արմինե Կիրակոսյան

խոսքի ընդհանուր թերզարգացումով նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի բնութագիրը

Մեր կողմից անցկացված գիտափորձերի արդյունքները փաստում են, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների պասիվ և ակտիվ բառապաշարն աղքատ է, երեխաների մոտ դիտվում են բառերի նպատակային կիրառման էական դժվարություններ, իմաստային դաշտերի ձևավորման առանձնահատկություններ, բառակազմական կարողությունների ձևավորման խանգարումներ: Ինչպես վկայում են նաև խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ նախադպրոցական հաստատություններում խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացմանն ուղղությամբ տարվող աշխատանքները համակարգված և բավարար չափով չեն իրականացվում, ինչի հետևանքով բառապաշարի աղքատությունը կայուն ձևով պահպանվում է դպրոցական տարիքում և բազմաթիվ դժվարություններ առաջացնում դպրոցական ծրագիրը յուրացնելիս:


Ելնելով վերը նշվածից՝ մշակվել է խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի օրինակելի մոդել: Մեկ տարվա մանկավարժական գիտափորձի տարբեր փուլերում լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

1. խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի քանակական հարստացում
2. Բառի իմաստի հստակեցում
3. Բառի նպատակային կիրառման կարողության զարգացում
4. Բառակազմական կարողությունների ձևավորում

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

- պասիվ բառապաշարի հարստացում, որը նպաստում է շրջապատող աշխարհի մասին երեխաների պատկերացումների ընդլայնմանը,

- ակտիվ բառապաշարի հարստացում, որտեղ մենք առանձնակիորեն կարևորել ենք բառի իմաստի հստակեցումը,
 - աշխատանք հոմանիշների և հականիշների շուրջ,
 - աշխատանք բառերի բազմիմաստության ուղղությամբ,
 - փոխաբերական և ընդհանրական իմաստ ունեցող բառերի շուրջ,
 - աշխատանք բառակազմական կարողությունների ձևավորման ուղղությամբ:
- Բառապաշարի հարստացմանն ուղղված այս աշխատանքներն իրականացվել են իրար հետ սերտ փոխկապակցված..



Նկար 1. Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացման ուղղությունները

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների ակտիվ բառապաշարի հարստացումն իրականացվել է հետևյալ հաջորդականությամբ.

- Նոր բառի ներմուծում երեխայի բառապաշար
- Ներմուծված բառի իմաստի հստակեցում
- Բառի ներմուծում հոմանիշային-հականիշային հարաբերությունների մեջ

- Նոր բառի ներմուծում նախադասության մեջ
- Բառի ներմուծում կապակցված խոսք

Նոր բառերի ուսուցումն իրականացվել է՝ հաշվի առնելով նախադարձական ծրագրի թեմատիկ պահանջները: Բացի այդ, ուսումնասիրվել են նաև դպրոցի I դասարանի «Այբբենարան» և «Մայրենի լեզու» դասագրքերն ու ուսումնական ծրագիրը[1;2]: Դպրոցական ծրագրում ընդգրկված որոշակի «խոսքային նյութ» և հանձնարարություններ են ներմուծվել խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադարձականների բառապաշարի հարստացմանն ուղղված աշխատանքներում, ինչը միտված էր երեխաների մոտ ձևավորելու այն կարողությունները, որոնք հետագայում առավելապես դժվարություններ են առաջացնում դպրոցական ուսուցման ընթացքում:

Երեխաների բառապաշարում նոր բառերի ներմուծումն իրականացվել է զննական հենքի վրա: Փորձարարական հետազոտության արդյունքները փաստեցին, որ այս երեխաների բառապաշարն աղքատ է, ինչպես նաև դրանում գերակշռում են կենցաղում հաճախակի կիրառվող և առարկայական նշանակություն ունեցող բառերը, ուստի մեր կողմից աշխատանքներ են ծավալվել բառապաշարի քանակական հարստացման, ինչպես նաև այն կենցաղում հազվադեպ հանդիպող բառերով, ածականներով, բայերով, ընդհանրական հասկացություններով համալրման ուղղությամբ [3;5]:

Առարկայական իմաստ ունեցող բառերի ներմուծման դեպքում երեխային ցույց է տրվել տվյալ առարկայի նկարը, եթե հնարավոր է՝ ստույգ առարկան՝ օգտագործելով միջանալիզատորային կապը: Փորձել ենք երեխայի ուշադրությունը սևեռել տվյալ առարկային առավել բնորոշ հատկանիշների վրա, բացատրվել է, թե որ դասին է պատկանում այդ առարկան: Երեխաների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքներում առանձնակի ուշադրություն ենք դարձրել նաև հատկանիշ ցույց տվող, փոխաբերական և ընդհանրական իմաստ ունեցող բառերին, հականիշներին և հոմանիշներին:

Այս նպատակով փորձարկվողներին առաջարկել ենք հատուկ ընտրված և մշակված խաղեր ու առաջադրանքներ:

Օրինակ, հատկանիշ ցույց տվող բառերի զարգացման նպատակով կիրառված «Կռահիր, թե ինչն է....» խաղի ընթացքում երեխայի առջև դրվում էին տարբեր մրգեր և բանջարեղեններ, երեխան պետք է ցույց տար, թե ինչն է «հյութալի», «փափուկ», «պինդ», «կլոր», «օվալաձև», և այլն, կամ օրինակ, ընդհանրական հասկացություններ ցույց տվող բառերի ուղղությամբ տարվող

լոգոպեդական աշխատանքներում կիրառված «Խանութից սպասք ենք գնել» խաղի ընթացքում երեխայի առջև դրվել են մրգերի, բանջարեղենների, կահույքի, խաղալիքների, կենդանիների, սպասքի նկարներ: Երեխան պետք է դրանց միջից առանձնացներ և պայուսակի մեջ դներ միայն «սպասք»-ին վերաբերող նկարները և այլն:

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական պարապմունքների ընթացքում լայնորեն կիրառվել են հեքիաթները՝ հորինվել են հեքիաթներ՝ ուղղված բառի հոմանիշային և հականիշային հարաբերությունների զարգացմանը, բառի փոխաբերական իմաստի ձևավորմանը, հատկանիշ ցույց տվող բառերի ձևավորմանը, հեքիաթների հերոսների օրինակների վրա վերլուծվել են մարդկային հատկանիշները :

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման լոգոպեդական աշխատանքներում մենք կարևորել ենք նաև հանելուկները՝ մի դեպքում երեխան պետք է կռահեր հանելուկի պատասխանը, ինչը կնպաստեր նրա պասիվ բառապաշարի հարստացմանը, իսկ մյուս դեպքում՝ պետք է ինքնուրույն հանելուկ հորիներ, ինչը կնպաստեր բառերի նպատակային կիրառման կարողության զարգացմանը: Այս վերջինն առավել բարդ էր, որովհետև երեխան պետք է ստույգ նշեր առարկայի բոլոր հատկանիշները՝ անպայմանորեն ընդգծելով առարկայի այն էական հատկանիշը, որը պարտադիր է տվյալ առարկան ճանաչելու համար: Օրինակ, երեխան պետք է կռահեր առաջարկված հանելուկի պատասխանը. /Գիշատիչ թռչուն է, ունի կեռ կտուց, սուր ճանկեր, սև փետուրներ/, /Միրգ է, հյութալի է, քաղցր, աճում է ողկույզներով/, /Յսկա կենդանի է, ապրում է անտառում, ունի հաստ մորթի, ծուռ թաթեր, մեղր է սիրում/, կամ ինքնուրույն պետք է հանելուկ հորիներ՝ «Մտածիր հանելուկ գնդակի մասին» ,«Դու հանելուկ մտածիր, իսկ ես կկռահեմ դրա պատասխանը» և այլն:

Երեխաների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական պարապմունքները զուգակցել ենք առարկայագործնական գործունեության տարբեր ձևերի հետ՝

- ապլիկացիա
- ծեփ
- նկարչություն
- խճանկարով աշխատանք

Այս պարապմունքներն առավելապես կարևորվել են մի կողմից այն հանգամանքով, որ մատների նուրբ շարժողականության զարգացումը դրականորեն է անդրադառնում խոսքի զարգացման վրա [4], մյուս կողմից՝ իրենց հուզականությամբ՝ երեխան ավելի հաճույքով է մասնակցում լոգոպեդական պարապմունքին և հետագայում ավելի հաճույքով է պատմում իր պատրաստած առարկաների մասին: Օրինակ, պարապմունքի ընթացքում կատարում ենք «Սոսնձում ենք և պատմում» ապլիկացիան, որի ընթացքում երեխայի հետ միասին պատրաստում ենք տոնածառ, զարդարում այն, այնուհետև հաջորդաբար պատմում պատրաստման ընթացքը և այլն:

Քանի որ գիտափորձի արդյունքները փաստեցին, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների ակտիվ բառապաշարը խիստ աղքատ է, այս երեխաների մոտ դիտվում են բառի նպատակային կիրառման էական դժվարություններ, իմաստային դաշտերի ձևավորման առանձնահատկություններ, բառակազմական կարողությունների ձևավորման խանգարումներ, ուսռի այդ նպատակով մշակվել են հատուկ խաղեր, առաջադրանքներ, հնարներ, որոնք ուղղված են վերը նշված կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:


Այսպես, օրինակ, բառի նպատակային կիրառման կարողության զարգացման նպատակով երեխային տրվում էր «Շարունակիր.....» առաջադրանքը՝ երեխան պետք է ավարտեր նախադասությունը՝ լրացնելով բացակայող բայը. /Քամուց տերևները.....(թափվում են, խշխշում են)/, /Քամուց ծառերը.....(օրորվում են)/, /Անձրևից հողը.....(խոնավանում է, թրջվում է)/ կամ, օրինակ, ,Կենդանու ի՞նչն է պակասումե խաղի ընթացքում երեխան պետք է ուշադիր նայեր կենդանիների նկարները և ասեր, որ պակասում են վագրի ,բեղերը, ձիու ,սմբակները, ագռավի ,ճանկերը, փղի ,կնճիթը, եղնիկի ,եղջյուրները և այլն:

Այսպես, իմաստային դաշտերի ձևավորման նպատակով երեխաներին հանձնարարվում էր օրինակ, «Կազմիր բառակապակցություններ առաջարկված բառերով» առաջադրանքը՝ օրինակ, /Սառը-սառը ջուր, սառը պաղպաղակ, սառը բնավորություն,/, / ջերմ –...../, /երկաթ-/: Իմաստային դաշտերի ձևավորման նպատակով մենք կարևորել ենք նաև հականիշների և հոմանիշների, բառերի բազմիմաստության ձևավորման շուրջ, փոխաբերական իմաստի ձևավորման շուրջ տարվող լոգոպեդական աշխատանքները: Այս նպատակով ևս մեր կողմից մշակվել են հատուկ խաղեր և առաջադրանքներ: Այսպես, օրինակ, հականիշների ձևավորման շուրջ տարվող լոգոպեդական աշխատանքների ընթացքում կիրառվել է «Ես ասեմ, իսկ դու շարունակիր» խաղը, որի ընթացքում երեխան պետք է շարունակեր միտքը՝


անվանելով հականիշ բառը՝ օրինակ, /Խնձորը քաղցր է, իսկ կիտրոնը-/, /Փիղը ուժեղ է, իսկ մկնիկը-/: Կամ այսպես, օրինակ, փոխաբերական իմաստի ձևավորման շուրջ տարվող աշխատանքներում կիրառվել է «Ասա ուրիշ ձևով» խաղը, որի ընթացքում երեխան պետք է փորձեր բացատրել՝ բառակապակցությամբ անվանել առաջարկված փոխաբերական իմաստ ունեցող դարձվածքները՝ /Ես ունեմ ոսկե սիրտ-Ես բարի եմ/, /Ես ունեմ պայծառ ուղեղ-/, /Աստղիկը մայրիկի աջ ձեռքն է-/, և այլն: Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքներում էականորեն կարևորվել է բառակազմական կարողությունների ձևավորումը:

Այս նպատակով ևս մշակվել են հատուկ հնարներ, առաջադրանքներ, խաղեր: Օրինակ, ,Բառերը միանում ենե խաղի ընթացքում երեխան պետք է անվաներ մեկ բառով /մաքրություն սիրող-..../, /աշխատանք սիրող-...../, /բարի սիրտ ունեցող-..../, և այլն կամ ,Կազմիր նոր բառեր առաջարկված բառերովե առաջադրանքը կատարելիս երեխան պետք է առաջարկված բառերով նոր բառեր կազմեր. /գույն-վարդագույն, երկնագույն, շագանակագույն.../, /Սեր-...../, /բարձր-..../ և այլն:

Այսպիսով, խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացման շուրջ տարվող լոգոպեդական աշխատանքներում լայնորեն կիրառվել են.




Մանկավարժական գիտափորձի ընթացքում մեր կողմից մեծապես կարևորվել է նաև խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների կողմից բառերի նպատակային կիրառման կարողության զարգացումը կապակցված խոսքում:



Նկար 2. Կապակցված խոսքում բառերի նպատակային կիրառման կարողության զարգացման ուղղությունները

Կապակցված խոսքում երեխաների կողմից բառերի նպատակային կիրառման կարողության զարգացումը իրականացվել է հետևյալ հաջորդականությամբ՝



Կապակցված խոսքում բառապաշարի հարստացման, բառերի նպատակային կիրառման զարգացման նպատակով երեխայի հետ անցկացվել են սյուժետային նկարների շարքով պատմվածք կազմելու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքներ: Սյուժետային նկարների շարքով պատմվածք կազմելուն նախորդել են նախապատրաստական աշխատանքներ առանձին սյուժետային նկարներ պատմելով:

Կապակցված խոսքում բառապաշարի նպատակային կիրառման զարգացմանն ուղղված աշխատանքների հաջորդ փուլում աշխատանք է տարվել երեխաների կողմից նկարագրական պատմվածք կազմելու կարողության զարգացման շուրջ:

Սակայն պետք է նշել, որ նկարագրական պատմվածքի ստեղծմանը նախորդել են նախապատրաստական աշխատանքները, որոնք իրականացվել են առանձին առարկաների նկարագրությամբ և դրանց պատրաստմամբ ծեփի, ապլիկացիայի միջոցով, նկարչությամբ: Այս պարապմունքների ընթացքում թվարկվել և քննարկվել են առարկայի հատկանիշները, ինչն էլ ուղղված էր երեխաների կողմից հատկանիշ ցուց տվող բառերի նպատակային կիրառման զարգացմանը: Նկարագրական պատմվածքի ընկալմանը և ստեղծմանը մեծապես նպաստել է երեխաների կողմից հանելուկների կռահումը և ստեղծումը, քանի որ հանելուկում պետք է ճիշտ և ամբողջական նկարագրվեն առարկայի բոլոր հատկանիշները, որպեսզի ունկնդրողը ճիշտ կռահի հանելուկի պատասխանը: Օրինակ, սպիտակ է, փափուկ է, իջնում է փաթիլ-փաթիլ:

Խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների բառապաշարի հարստացմանն ուղղված աշխատանքներում մեծապես կարևորվել են նաև պատմվածք վերապատմելու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքները, որոնք նպաստում են պասիվ բառապաշարի հարստացմանը՝ պատմվածքի ըմբռնմանը և ակտիվ բառապաշարի հարստացմանը՝ բառերի նպատակային կիրառման կարողության զարգացմանը՝ պատմվածքի վերարտադրում:

Նախքան պատմվածքի վերապատմելը երեխայի հետ անցկացվում են աշխատանքներ առանձին նկարների հետ: Երեխան իր առջև դրված տարբեր սյուժետային նկարներից պետք է ընտրեր այն նկարը, որի մասին պատմվում է: Նմանատիպ աշխատանքներից հետո իրադրությունը բարդացվում էր՝ երեխան պետք է սյուժետային նկարների միևնույն շարքի միջից ընտրեր այն սյուժետային նկարը, որի մասին պատմվում է:

Այնուհետև երեխային առաջարկվել է լսել պատմվածքը, լսելուց հետո հարցերի միջոցով քննարկվել է բովանդակությունը, առաջարկվել են հատկապես այնպիսի հարցեր, որոնք ուղղված էին պարզաբանելու, թե երեխաները հասկացել են արդյոք պատմվածքի հիմնական միտքը, ինչը սակայն պատմվածքում որևէ ձևով բառացիորեն արտահայտված չէր: Այս ամենից հետո երեխան պետք է պատմեր այն, որի ժամանակ մեծ ուշադրություն էր դարձվում երեխաների կողմից առարկայի հատկանիշ ցույց տվող, ինչպես նաև տարածական, ժամանակային հարաբերությունների արտահայտող բառերի կիրառմանը, բովանդակության լիարժեք վերարտադրմանը:

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված աշխատանքների հաջորդ փուլում

աշխատանք է տարվել նաև երկխոսության և հանձնարարված թեմայի շրջանակներում պատմվածք կազմելու ընթացքում բառերի նպատակային կիրառման կարողության զարգացմանը: Այս նպատակով մշակվել են հատուկ առաջադրանքներ, խաղային իրադրություններ: Օրինակ, «Յեռախոսագրույց տիկնիկի հետ» խաղային իրադրությունում երեխան պետք է, հեռախոսով զրուցի տիկնիկի հետ և տիկնիկից հարցնի, թե ինչպես է տիկնիկը պատրաստվում իր մայրիկի տարեդարձին (մայրիկին ի՞նչ է նվիրելու, մայրիկի ծննդյան կապակցությամբ ի՞նչ է պատրաստելու և այլն): «Պատմիր արջուկին մեր զբոսանքի մասին» խաղային իրավիճակում երեխան պետք է արջուկին պատմի, թե ինչպես է զբոսնել բակում, ինչով է զբաղվել՝ պատասխանելով արջուկի հարցերին:

Միևնույն ժամանակ պետք է նշել նաև, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական պարամունքների ընթացքում աշխատանքներ են տարվել նաև ուղղված այս երեխաների խոսքի մյուս բաղադրիչների զարգացմանը՝ մասնավորապես քերականական կառույցին և բառի հնչյունավանկային կառույցին:

Բացի այդ պետք է նշել, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացման նպատակով կիրառված միջոցները նպաստել են նաև այս երեխաների խոսքային ակտիվության բարձրացմանը, խոսքային նախաձեռնության ընդլայնմանը, երեխաների ընդհանուր ճանաչողական ակտիվության զարգացմանը:

Այսպիսով, մեր կողմից մշակված խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացման լոգոպեդական մոդելը հիմք կծառայի այս երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստման աշխատանքների արդյունավետության բարձրացման համար:

Գրականություն

1. Գյուլամիրյան Ջ, Մարտիրոսյան Լ.-Մայրենի լեզու I / հանրակրթական դպրոցի դասագիրք Ե.2006 ,էջ 191
- 2.Սարգսյան Վ- Այբբենարան //հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար Ե. 2003,էջ 119
3. Глухов В. П.-Формирование связной речи детей дошкольного возраста с общим недоразвитием речи-2-е изд. М.2004
4. Кольцова М. М -Ребенок учится говорить М. 1973
5. Филичева Т. Б. , Чиркина Г. В. , - Устранение ОНР у детей до школьного возраста – Москва 2008,- 224с.

Характеристика логопедической работы по обогащению словаря дошкольников с общим недоразвитием речи

В статье представлена характеристика логопедической работы по обогащению словаря дошкольников с общим недоразвитием речи. Описываются основные направления логопедической работы по обогащению словаря у детей с общим недоразвитием речи.

The Characteristics of Speech Therapy Aimed at Vocabulary Enrichment of Preschool Children with Speech General Retardation

Summary

The characteristics of speech therapy aimed at vocabulary enrichment of preschool children with speech general retardation is introduced in the article. The primary approaches to speech therapy intended to enrich the vocabulary of preschool children with speech general retardation are described.